

ՈՐՈՇՈՒՄ

Կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովի

ք. Երևան

21 օգոստոսի 2020 թ.

Կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ կազմով՝ Հ. Թորոսյանի (նախագահող), Թ. Հարությունյանի (գեկուցող) և Տ. Նահապետյանի, հիմք ընդունելով «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 14-րդ հոդվածները, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի թիվ 645-Ն որոշման 9-րդ և 18-րդ կետերով՝ փաստաբաններ Արա Զոհրաբյանի, Մանե Կարապետյանի, Սիմոն Բաբայանի, Մելանյա Առուստամյանի, Գևորգ Մկրտչյան, Արաքս վարդանյանի կողմից 2020թ. հուլիսի 22-ին վարչապետի աշխատակազմ մուտքագրված կոլեկտիվ հանրագրի (այսուհետ՝ կոլեկտիվ հանրագիր) քննարկման արդյունքներով՝ որոշեց հաստատել կոլեկտիվ հանրագրի պատասխանը:

ՊԱՏԱՍԽԱՆ

Կոլեկտիվ հանրագրի

Հանձնաժողովն արձանագրում է, որ կոլեկտիվ հանրագրում տեղ գտած հարցերի և առաջարկությունների վերաբերյալ հանձնաժողովի դիրքորոշումը հանգում է հետևյալին.

1. Կոլեկտիվ հանրագիր ներկայացրած անձինք, համապատասխան իրավանորմերի վերլուծության արդյունքում, առաջարկություն են ներկայացրել ՀՀ կառավարությանն առ այն, որ Պարետի կողմից հանրային բաց տարածքներում միայնակ մարդու կողմից դիմակ կրելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցում ընտանիքի անդամների կողմից դիմակ կրելու սահմանափակումները վերացվեն:

Կոլեկտիվ հանրագրի հեղինակների կողմից, որպես հիմնական փաստարկ, անդրադարձ է կատարվում համաչափության սկզբունքի համատեքստում անձի բնական իրավունքի սահմանափակմանը բոլոր այն դեպքերում, երբ հանրագրի հեղինակների կարծիքով բացակայում են Պարետի կողմից ամրագրված

սահմանափակումների միջոցով հետապնդվող նպատակին, այն է՝ անձանց կյանքի կամ առողջության պահպանումը, հասնելու հնարավորությունը:

Այսպես, ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ սույն թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված է արտակարգ դրություն: Կոլեկտիվ հանրագրով անդրադարձ է արված վերոնշյալ որոշմամբ ստեղծված պարետատան ղեկավարման համար նշանակված Պարետի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» 2020թ. մայիսի 3-ի թիվ 63 որոշմանը (այսուհետ՝ Որոշում)՝ հատկապես դրանում տեղ գտած առանձին սահմանափակումներին:

Անդրադառնալով կոլեկտիվ հանրագրի հեղինակների կողմից քննարկման առարկա դարձած սահմանափակումներին՝ հանձնաժողովն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ այդպիսիք ի սկզբանե բացակայել են Որոշումից: Միևնույն ժամանակ, Որոշումը պարբերաբար ենթարկվել է փոփոխությունների՝ պայմանավորված վարակի տարածման հետևանքով երկրում տիրող համաճարակային իրադրությամբ: Մասնավորապես, կոլեկտիվ հանրագրում քննարկվող սահմանափակման սկզբնական տարբերակը ներառվել է Որոշման մեջ՝ Պարետի «Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի 63 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020թ. հունիսի 3-ի թիվ 110-Ն որոշմամբ, որի 6-րդ կետի համաձայն՝ բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս՝ բոլոր հանրային բաց տարածքներում, դիմակ կրելը պարտադիր է՝ բացառությամբ մինչև 6 տարեկան երեխաների և ֆիզիկական վարժություններ կամ հեծանվավարություն իրականացնելիս: Ընդ որում՝ շեշտվել է, որ դիմակն անհրաժեշտ է կրել՝ հիշյալ որոշման հավելված 18-ով սահմանված կանոններին համապատասխան: Պարետի մեկ այլ՝ «Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի 63 որոշման մեջ լրացում կատարելու մասին» 2020թ. հուլիսի 8-ի թիվ 179-Ն որոշմամբ վկայակոչված 6-րդ կետը լրացվել է, համաձայն որի՝ քրոնիկ շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն, էմֆիզեմա կամ բրոնխիտ՝ ծանր շնչառական անբավարարության առկայության դեպքում, ինչպես նաև 3-րդ, 4-րդ ֆունկցիոնալ դասի քրոնիկ սրտային անբավարարություն ունեցող անձինք հանրային բաց տարածքներում կարող են չկրել դիմակ՝ պայմանով, որ վերջիններս իրենց մոտ ունենան համապատասխան հիվանդության փաստը հաստատող բժշկական փաստաթուղթ: Նման որոշման կայացման համար, ըստ հանձնաժողովի նախագահի կողմից որպես մասնագետ ներգրավված ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցչի միջոցով

տրամադրված տեղեկատվության՝ հաշվի են առնվել մի շարք փաստաթղթեր՝ հետևյալ հղումներով:¹ Հաշվի է առնվել նաև այդ մասով միջազգային փորձի վերլուծությունը:

Որոշման պարբերաբար փոփոխությունների և երկրում տիրող համաճարակային իրադրության պատճառահետևանքային կապի մասի է վկայում նաև Պարետի «Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020թ. օգոստոսի 14-ի թիվ 248-Ն որոշումը, որով կոլեկտիվ հանրագրով ներկայացված՝ բաց տարածքներում միայնակ մարդու կողմից դիմակ կրելու սահմանափակումը վերացնելու առաջարկի հետ որոշակիորեն համադրելի կարգավորումներ են նախատեսվել՝ կրկին առկա իրավիճակի գնահատմամբ: Այսպես՝ նշված փոփոխության արդյունքում, ի թիվս արդեն իսկ նշված դեպքերի, ամրագրվեց, որ դիմակ կրելը պարտադիր չէ գյուղական և քաղաքային բնակելի վայրերից դուրս՝ բացօթյա հանգստի նպատակով նախատեսված վայրերում, հանգստյան գոտիներում և լողափներում, սարերում, անտառներում և նմանատիպ բացօթյա տարածքներում, սակայն ոչ՝ պատմամշակութային վայրեր այցելությունների, ուխտագնացության, որպես տնտեսական գործունեություն կազմակերպված՝ անհատական և խմբային արշավների, էքսկուրսիաների, քայլարշավների, ուղևորությունների և նման բնույթի այլ միջոցառումների մասնակցության դեպքում:

Քննարկվող սահմանափակման նպատակահարմարության և վերջինիս՝ առկա իրավիճակի պայմաններում կիրառման համաչափության մասով վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալին.

Առհասարակ դիմակների կրման պարտադիրության և դրա շնորհիվ համաճարակային իրադրության մեղմացման վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ԱՀԿ), ով դիմակ կրելու հորդորի հետ մեկտեղ խորհուրդ է տալիս դիմակի կրումը պարտադիր դարձնելու դեպքում հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝ դիմակ կրելու նպատակը, տարածման ռիսկերը, դիմակ կրողների կամ հասարակության խոցելիությունը: Հետևելով ԱՀԿ-ի կողմից սահմանված չափանիշներին, ինչպես նաև հաշվի անելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային

¹ <https://www.bhf.org.uk/informationsupport/heart-matters-magazine/news/coronavirus-and-your-health/coronavirus-and-face-masks#Heading6>, [https://www.who.int/publications/i/item/advice-on-the-use-of-masks-the-community-during-home-care-and-in-health-care-settings-in-the-context-of-the-novel-coronavirus-\(2019-ncov\)-outbreak \(8-րդ Էջ\):](https://www.who.int/publications/i/item/advice-on-the-use-of-masks-the-community-during-home-care-and-in-health-care-settings-in-the-context-of-the-novel-coronavirus-(2019-ncov)-outbreak-(8-րդ-Էջ):)

հիվանդացության ակտիվ դեպքերի քանակը և նպատակ ունենալով նվազեցնել նման դեպքերը, համավարակի ակտիվ տարածումը՝ կայացվել է հանրային բաց տարածքներում դիմակի պարտադիր կրման վերաբերյալ որոշում:

Սկզբնական շրջանում, երբ վարակակիրների թիվը քիչ էր, ԱՀԿ-ն կորոնավիրուսով չվարակված մարդկանց խորհուրդ չէր տալիս կրել դիմակներ, քանի որ այն հիմնականում ոչ թե պաշտպանում է չվարակվելուց, այլ օգնում է չվարակել այլոց: Ըստ այդմ՝ դիմակ խորհուրդ էր տրվում կրել վարակված մարդկանց կամ նրանց, ովքեր խնամում են վարակակրին, ինչպես նաև քրոնիկ հիվանդություններ ունեցող և վաթսուներ անց մարդկանց: Որից հետո, սակայն, ԱՀԿ-ի կողմից հունիսի 5-ին² հրապարակված ուղեցույցում նշվում է, որ դիմակը պետք է օգտագործվի՝ որպես վիրուսի դեմ պայքարելու համապարփակ ռազմավարության մի բաղադրիչ, որը կօգնի սահմանափակել վիրուսի տարածումը և փրկել կյանքեր:

Ընդգծելով դիմակների կրման արդյունավետությունը, այդուհանդերձ, հանձնաժողովը հարկ է համարում անդրադարձ կատարել, մասնավորապես, բացօթյա տարածքում դիմակի կրման պարտադիրության համաչափությանը:

Այսպես՝ ընդհանուր շահերի և մասնավոր անձի հիմնարար իրավունքների միջև հավասարակշռությունն ապահովվում է միջամտության համաչափությամբ: Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Համաչափության սկզբունքի էությունը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների հարցում, մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովումն է, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն: Համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության

² [https://www.who.int/publications/i/item/advice-on-the-use-of-masks-the-community-during-home-care-and-in-health-care-settings-in-the-context-of-the-novel-coronavirus-\(2019-ncov\)-outbreak](https://www.who.int/publications/i/item/advice-on-the-use-of-masks-the-community-during-home-care-and-in-health-care-settings-in-the-context-of-the-novel-coronavirus-(2019-ncov)-outbreak)

ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը:

Ասվածի համատեքստում պետք է ևս մեկ անգամ նշել, որ արտակարգ դրության հայտարարման պահից ի վեր Պարետի կողմից ընդունվել են մի շարք սահմանափակումներ, որոնք ժամանակի ընթացքում և պայմանավորված վարակի տարածման տեմպերով, պարբերաբար փոփոխել են իրենց բնույթը՝ կրելով առավել խիստ կամ նվազ խստության բնույթ: Մասնավորապես, համաչափության սկզբունքի տարրեր հանդիսացող պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության ապահովման նպատակով՝ քննարկվող միջոցների կիրառման հնարավորությունը, ըստ էության, քննարկման առարկա է դարձել կորոնավիրուսային վարակվածության առավելագույն ցուցանիշների դեպքում միայն, ինչը վկայում է, որ մինչև քննարկվող սահմանափակումների ընդունումը ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները՝ առավել նվազ միջամտությամբ ցանկալի արդյունքի հասնելու համար, որից հետո միայն ձեռնարկվել առավել ինտենսիվ միջամտություն, որն էլ ակնհայտորեն տվել է դրական արդյունք, որպիսի հանգամանքը փաստվում է ներքոշարադրյալով:

Ներգրավված մասնագետի միջոցով ստացված տեղեկատվության համաձայն՝ կորոնավիրուսի համավարակի ընթացքում հանրային բաց տարածքներում և տրանսպորտային միջոցներում դիմակ կրելու պարտադիր պահանջի սահմանման արդյունքում հիվանդության առնվազն 2 գաղտնի շրջանից հետո՝ դեպքերը նվազել են 2.3 անգամ, իսկ օգոստոսի 14-ի դրությամբ, համեմատած հունիսի 3-ի դեպքերի հետ, 2.7 անգամ: Արդեն իսկ առկա են մի շարք գիտական հետազոտություններ, որոնք հավաստում են, որ դիմակների պարտադիր կրելու պահանջի սահմանումից հետո առաջիկա 4-8 շաբաթների ընթացքում հնարավորություն կընձեռվի վերահսկել կորոնավիրուսային համավարակը, ինչը և առարկայական կերպով փաստում են Հայաստանի Հանրապետության վերը նշված ցուցանիշները:³

Համաչափության սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) որոշումներում: ՄԻԵԴ

³ <https://www.wsj.com/articles/face-masks-really-do-matter-the-scientific-evidence-is-growing-11595083298?mod=e2fb&fbclid=IwAR0t9DXcJm6xfcataaT1rZr5w81kF7CW4bXuy4xyruYnVqnF9spVkr7c2ww>, [https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736\(20\)31142-9/fulltext](https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736(20)31142-9/fulltext), <https://www.metronews.ru/novosti/world/reviews/maski-pomogli-stranam-azii-pobedit-virus-1698593/>, <https://royalsociety.org/-/media/policy/projects/set-c/set-c-facemasks.pdf?la=en-GB&hash=A22A87CB28F7D6AD9BD93BBBCBFC2BB24> :

դիրքորոշմամբ՝ իրավունքների և ազատությունների պետական միջամտության համաչափությունը պետք է գնահատվի «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության տեսանկյունից»: Ընդ որում՝ «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» կատեգորիայի գնահատումը իրականացվում է միասնական չափանիշներով, որոնք տրվում են ՄԻԵԴ պրակտիկայում: Այսպես՝ միջամտությունը պետք է պայմանավորված լինի հրատապ հասարակական պահանջներով, լինի համարժեք իրավական նպատակներին հասնելու համար, իսկ փաստարկները, որոնք բերում է պատասխանող պետությունը միջամտության օգտին, պետք է լինեն համոզիչ և անվիճելի: Նշված պարագայում պետության կողմից ձեռնարկված միջոցները բխում են մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայության սկզբունքից, ինչպես նաև համաճարակի կանխարգելման, համաճարակային իրադրության պայմաններում բնակչության պաշտպանության, բնակչության առողջության պահպանման և առողջական վիճակի բարելավման նպատակներից, որի պարագայում պետության կողմից ձեռնարկված միջոցառումների և հետապնդվող նպատակների համաչափությունը առավել քան ակնհայտ է՝ հաշվի առնելով հրատապ հասարակական պահանջը:

Միաժամանակ, կիրառվող սահմանափակումների համատեքստում ժողովրդավարության սկզբունքների պահպանման, օրենքի և մարդու իրավունքների գերակայության խնդիրներին COVID-19-ի պայմաններում անդրադարձել է նաև Եվրոպայի խորհուրդը⁴: Մասնավորապես նշվել է, որ պետությունները պետք է գործիքներ կիրառեն ճգնաժամի լուծման համար, ինչն արդյունքում անխուսափելիորեն հանգեցնելու է որոշ իրավունքների սահմանափակման, և պետությունների գլխավոր խնդիրն է լինելու այդ մարտահրավերներին արդյունավետորեն արձագանքելու կարողությունը, իսկ կիրառված միջոցների արդյունքում սահմանափակումները չպետք է խաթարեն պետությունների երկարաժամկետ ծրագրերը՝ ժողովրդավարության սկզբունքների պահպանման, օրենքի և մարդու իրավունքների գերակայության ոլորտում: Միաժամանակ, չի բացառվում այն հանգամանքը, որ բացառիկ բնույթի որոշ միջոցառումներ կարող են պահանջել որոշակի բացառություններ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ստանձնած պետությունների պարտավորություններից:

Ընդ որում, թե «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ, թե «Քաղաքացիական

⁴ Council of Europe, Respecting democracy, rule of law and human rights in the framework of the COVID-19 sanitary crisis, 7 April 2020

և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով թույլատրվում է արտակարգ դրության ժամանակ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից շեղում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, անդրադառնալով «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով նախատեսված արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու պետության պարտավորությունից շեղումներին, թիվ 29 մեկնաբանությամբ⁵ նշել է, որ այդ շեղումները թույլատրելի են, եթե՝

- դրանք կրում են ժամանակավոր բնույթ,
- կիրառվում են երկրում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում,
- կիրառվող միջոցները պահանջվում են արտակարգ դրությունից ելնելով,
- կիրառվող միջոցները չպետք է լինեն խտրական:

ՄԻԵԴԸ, անդրադառնալով կոնվենցիայի 15-րդ հոդվածի մեկնաբանությանը, նշել է, որ պետության հայեցողությանն է թողնված ընտրելու այն միջոցները, որոնցով հնարավոր է հաղթահարել արտակարգ դրությունը: Իրավիճակին և հասարակության կարիքներին պետության անմիջական և ուղղակի առնչության ուժով կոնվենցիայի 15-րդ հոդվածը նրան տրամադրում է լայն հայեցողություն կիրառելու միջոցներ⁶: Իհարկե, այդ միջոցները չպետք է լինեն անսահմանափակ և պետք է պահանջվեն արտակարգ իրավիճակը հաղթահարելու համար:

Մյուս կողմից պետք է նշել, որ վարակակիրների շրջանում բավական մեծ թիվ են կազմում ասիմպտոմ վարակակիրների թիվը, նրանք, ովքեր չունեն այս հիվանդությամբ վարակված լինելու որևէ ախտանշան: Հետևաբար՝ որևէ մեկը վստահ չի կարող ասել, թե ինքը վարակակիր չէ և չի վարակի դիմացինին, եթե հանրային բաց և փակ վայրերում չկրի պաշտպանիչ դիմակներ:

Համաձայն ԱՀԿ առաջարկի՝ դիմակ կրելը արդյունավետ է, բոլոր այն վայրերում, որտեղ սոցիալական հեռավորության պահպանումը դժվար է կամ

⁵ <http://hrlibrary.umn.edu/gencomm/hrc29.html>

⁶ ECHR, Ireland v. the United Kingdom, § 207

հնարավոր չէ:⁷ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փողոցում միայնակ գտնվող մարդը չի կարող ապահովել անհրաժեշտ սոցիալական հեռավորություն և հնարավոր չէ հստակեցնել այն շառավիղը, որից այն կողմ անձն այլևս վտանգավոր չի լինի հասարակության համար, ապա տվյալ պարագայում դիմակի կրումը ամենահարմար տարբերակն է՝ չվարակվելու և այլոց չվարակելու: Այդ իսկ պատճառով որոշ երկրներ ստանդարտացրել են դիմակ կրելու պահանջը բոլորի համար՝ առանց բացառությունների, նույնիսկ սահմանափակող միջոցառումների փուլային հանելու պարագայում:

Պետք է փաստել այն հանգամանքը, որ դիմակների կրման վերաբերյալ որևէ միասնական մոտեցում չկա ո՛չ տեղական, ո՛չ միջազգային կազմակերպությունների կողմից, և դրա վերաբերյալ կարծիքները փոխվում են վարակի տարածման տեմպերի հետ միասին: Ավելին, միջազգային փորձի ուսումնասիրումը նույնպես փաստում է, որ պետությունները տարբերակված մոտեցում են դրսևորել այս հարցում՝ կախված տվյալ պահին տվյալ երկրում տիրող համաճարակային իրավիճակից:

Մասնավորապես, մարտի վերջից Ավստրիայում պաշտպանիչ դիմակների օգտագործումը պարտադիր էր բոլոր փակ վայրերում՝ խանութներում, դեղատներում, առևտրի կենտրոններում, իսկ քիչ ավելի ուշ՝ ապրիլի 6-ից, դիմակների կրումը պարտադիր դարձավ նաև Ավստրիայի բոլոր հանրային վայրերում: Այդպիսի որոշումից հետո Ավստրիայում զգալի նվազեց կորոնավիրուսով վարակվածների թիվը:⁸

Հանրային բոլոր տարածքներում պարտադիր դիմակ կրելու վերաբերյալ որոշումներ կայացրել են նաև Հոնկոնգը, Չինաստանը: Չինաստանում, ուր դիմակների պարտադիր կրման վերաբերյալ որոշում է կայացվել համավարակի սկզբում, արձանագրվել է մոտ 90 հազար դեպք, ինչը հսկայական բնակչություն ունեցող Չինաստանի համար բավականին փոքր թիվ է կազմում:

Իսկ այն երկրներում, որտեղ դիմակի կրման պարտադիր պահանջ չկա, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, այստեղ վարակակիրների թիվն ավելանում է:

⁷ https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/332293/WHO-2019-nCov-IPC_Masks-2020.4-rus.pdf?sequence=20&isAllowed=y/:

⁸ <https://www.aljazeera.com/news/2020/04/countries-wearing-face-masks-compulsory-200423094510867.html>

Հայաստանի Հանրապետությունում սահմանափակումների թուլացման պարագայում, դիմակների պարտադիր կրումը, ինչպես փակ, այնպես էլ բացօթյա տարածքներում, թեև ոչ միակ, սակայն այն էական հակահամաճարակային միջոցառումն է, որը կարող է վարակի տարածման տեմպը էականորեն նվազեցնել:

Հիշատակված կարգավորումների, միջազգային պարտավորությունների և փորձի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրում է, որ դիմակների պարտադիր կրման պահանջի ամրագրմամբ սահմանափակման է ենթարկվում ազատ տեղաշարժվելու իրավունքը: Նման սահմանափակման համար հիմք է հանդիսացել Սահմանադրության 76-րդ հոդվածի կարգավորումն առ այն, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներից և ազատություններից որոշները, այդ թվում նաև՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Հիշյալ սահմանադրական նորմի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ քննարկման առարկա հանդիսացող սահմանափակումները կիրառվում են անձանց ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման համատեքստում՝ առողջության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով՝ իրավիճակին համարժեք թույլատրելի շեղումների սահմանում, համաչափ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակմանը և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Հանձնաժողովի կողմից բարձրացված՝ պարտադիր դիմակ կրելու ընթացքում մարդու կողմից անբավարար քանակության թթվածին ստանալու վերաբերյալ հարցին ի պատասխան՝ ներգրավված մասնագետի միջոցով ստացվել է պատասխան առ այն, որ բժշկական դիմակները արտադրվում են տեխնիկական կանոնակարգի, ազգային ստանդարտի պահանջներին համապատասխան և չպետք է բացասական ազդեցություն ունենան օգտագործողի առողջության վրա, իսկ դիմակի կիրառման արդյունքում մարդու առողջության վրա բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:⁹

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես քննարկվող, այնպես էլ մինչ այս Պարետի կողմից կայացված որոշումներով կիրառման ենթակա սահմանափակումները կարող

⁹ http://www.sarm.am/js/editor_innova/assets/AST_GOST_R_58396-2020_RU.pdf


են հանվել բացառապես նման սահմանափակումների համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացման պարագայում:

2. Կոլեկտիվ հանրագրով ներկայացվող հաջորդ առաջարկի, այն է՝ տրանսպորտային միջոցում ընտանիքի անդամների կողմից դիմակ կրելու սահմանափակումների վերացման վերաբերյալ հանձնաժողովն արձանագրում է, որ Պարետի «Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի 63 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020թ. օգոստոսի 14-ի թիվ 248-Ն որոշմամբ փոփոխության է ենթարկվել Որոշման 7-րդ կետը, ինչի արդյունքում անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում վարորդից բացի առնվազն մեկ ուղևորի առկայության պարագայում դիմակի կրման պարտադիր պահանջի փոխարեն ամրագրվել է, որ Պարտադիր դիմակ կրելու այլ դեպքերը և պահանջները սահմանվում են հիշյալ որոշման Հավելվածներ 2-17-ով:

Այսինքն, կոլեկտիվ հանրագրի շրջանակում քննարկվող՝ ընտանիքի անդամների կողմից տրանսպորտային միջոցներում դիմակի պարտադիր կրման մասով սահմանափակումը վերացվել է այնքանով, որքանով նշված անձինքն գտնվելու են իրենց պատկանող տրանսպորտային միջոցում, իսկ մնացած բոլոր դեպքերում գործելուն են հիշյալ որոշմամբ ցամաքային ուղևորատար տրանսպորտի համար նախատեսված անվտանգության կանոնները:

Վերոշարադրյալի արդյունքում հանձնաժողովն արձանագրում է, որ կոլեկտիվ հանրագրում ներկայացված վերոհիշյալ հարցին անդրադարձ կատարելն այլևս ժամանակավրեպ է, հաշվի առնելով համաճարակային իրավիճակով պայմանավորված սահմանափակումների վերանայման Պարետի որոշումը:

Կառավարության հանրագրերի հարցերով
հանձնաժողովի նախագահ



Հ. Թորոսյան